

ՀԱՆԳԻՍՏ ՀՈԳԻՈՅ

Հ. ՍԱՀԱԿ Վ. ՏԵՐ ՄՈՎՍԵՍԵԱՆԻ



Մխիթարի յարկին տակ այսօրան ցնցիչ զոյժ է լսուած երբեք: Ու բոթը կը ծաւալի սենեակէ սենեակ, սրտէ սիրտ, միշտ անհաւատալի. մինչեւ որ հեռաձայնը դարձեալ կը հնչէ, եւ այս անգամ Մուրադ-Ռաֆայէլեանի մէջ պաշտօնավարող վարդապետին ծանօթ ձայնն է որ կսկիւծազին կը հաղորդէ՝ իբրեւ տկանատես ցաւազին ողբերգութեան:

Կը փութանք տաճար, Մխիթարի կանթեղին առկայծումներուն տակ՝ աղօթելու եւ յաւիտենական հանգիստ հայցելու լուսահոգի վարդապետին:

Ու հիմա կայծ մըն ալ ինքն է, ամէնուս սիրելին. կայծ մը անշէջ, որ Տարօնի չքնաղ երկինքէն ինկած, բորբոքեցաւ հայազարմ հարիւրաւոր պատանիներու սրբունի մէջ, կայծ մը ոսկեղէն՝ զոր չեն կըրնար եղծանել ու մարել վենետիկի ջուրերը սառնորակ:

Գիտաւոր մըն էր՝ որ անցաւ:

Վստահ ենք որ Ամենակալը յատուկ աթոռ մը պատրաստած է իր այս ընտրեալ մշակին. այն որ լոյսն անգաւ շատերու, լոյսերու մէջ կը հանգչի անշուշտ հիմա, ու երկինքէն պիտի բարեխօսէ եւ արժանի սգաւոր սրտերը՝ նորանոր բոցեր պատրաստելով Մխիթարի ջահին:

Բազմաթիւ են այս առիթով Ս. Ղազար հասած ցաւակցական նամակներն ու հեռագիրները, արդիւնք՝ հանգուցեալին վայելած լայն ժողովրդականութեան: Ու մինչ Մխիթարեան Միաբանութեան անունով՝ շնորհակալութիւն կը յայտնենք բոլորին, կը խոստանանք առաջիկայ թիւով աւելի մօտենալ հանգուցեալին կեանքին ու գործին լուսաշող հետքերուն:

ԽՄԲ.

Բոթ ահաւոր....

Հ. Սահակ Վրդ. ոչ եւս է:

Կը գուժէ հեռաձայնը եւ ուրախութեան ժպիտը կը սառի մեր շրթներուն վրայ: Ծնունդի հրճուագին զօղանջները կը փոխուին յանկարծ տրտմաթախիժ մահերգի, մեռելական հեծկտանքներու:

Անկարելի էր հաւատալ. քիչ առաջ տեսած էինք զինքը ժպտողէմ, մարդարեանման իր Երեսօթով, պատկառազեցիկ իր տեսքով, յորեկանի պատարագի ընթացքին՝ հինաւուրց հայրապետի մը նման աղօթքի մէջ խորատուլում. ողջագործուած էինք միասին՝ պայծառ արեւու անոյշ շողերուն տակ:

ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑԱՆԿ

“ Բ Ա Ջ Մ Ա Վ Է Պ ”

1956

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՆԱՇԵԱՆ Հ. ՄԵՍՐՈՊ	Մխիթար - խորհուրդը, թէ իսկական մեծութիւնը	1
ՏԵՐ ՆԵՐՍԵՍԵԱՆ Հ. ՆԵՐՍԵՍ	Մեծագործ Քահանայապետը	49

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆԱՆԵԱՆ Հ. ՊՕՂՈՍ	Դաւիթ Անյաղթի անտիպ մէկ ճառը	63, 89
ԶՐԱՔԵԱՆ Հ. ՔԵՐՈԲԷ	Խմբագիր Բեկնութիւն Կաթողիկէ թղթոց: Ներածութիւն. Ա.	145
ՏԵՐ ՆԵՐՍԵՍԵԱՆ Հ. ՆԵՐՍԵՍ	«Դրախտագիրք» Առաքել Սիւնեցիի (քննութիւն եւ բնագիր)	3, 148, 200, 241
ԲԻԻՐՏԵԱՆ Յ.	Նորագիտ օրինակ մը «Անսիգ Անտիֆայ» օրինակը	15

ՊԱՏՄԱԿԱՆ

ՀԱՆԱՆԵԱՆ Ս.	Հայոց աշխարհի զրջազրկերի ամենահարուստ Մատենադարանի՝ Հաղբատի Ս Նշան վանքի ողբերգական վախճանը 1778-1799 թթ. եւ Ս. Էջմիածնի վանքի վաւերագիրների անխիղճ ոչնչացումը Հաղբատում	107
ԲԻԻՐՏԵԱՆ Յ.	Նորագիտ նիւթեր Պոօշեանց կամ Խաղբակեանց մասին	101
— — — — —	Մամիկոնեաններու Դսեղի ճիւղը	155, 246
ՖՈԿՈՂԵԱՆ Հ. ԱՆԴՐԷԱՍ	Ապետիք Կոմսի զարմանալի կեանքը (չար. եւ վերջ)	70

ԾԻՍԱԳԻՏԱԿԱՆ

ՀԱՅՈՒՆԻ Հ. ՎԱՐԴԱՆ	Պատմութիւն Հայոց Աղօթամատոյցին 22, 77, 95, 137, 206, 257	
-------------------	--	--